Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իր գործունեության շրջանակում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ՁՊՄԿ» կամ «Ընկերություն») ձգտում է նվազագույնի հասցնել իր ազդեցությունը կլիմայի վրա, բարձրացնել կայունությունը կլիմայական փոփոխություններին նկատմամբ և իր ներդրումն ունենալ Հայաստանի կայուն տնտեսության մեջ: Մենք կապահովենք, որ կլիմայի հետ կապված ռիսկերի և հնարավորությունների իրական և հնարավոր ազդեցությունը Ընկերության գործունեության, ռազմավարության և ֆինանսական պլանավորման վրա առանցքային լինի որոշումներ կայացնելիս:

Ակնկալվում է, որ Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպությունները պետք է նպաստեն դեկարբոնիզացիայի մեր գործունեության շրջանակում:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ՁՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ակտիվ առաջնորդության միջոցով խրախուսում է աշխատանքի կայուն մեթոդներ կազմակերպության բոլոր մակարդակներում և այն համայնքներում, որտեղ գործունեություն է ծավալում: Նշյալ մեթոդները նպաստում են Ընկերության գործունեության դեկարբոնիզացիային:

- ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը (և ակտիվ աշխատում է նույնը մեր գործընկերների մասով ապահովելու հարցում) կիրառելի ՀՀ օրենսդրությանը և հանքարդյունաբերության ոլորտի զարգացման Ռազմավարությանը, ինչպես նաև միջազգային ստանդարտներին և պարտավորություններին, ներառյալ ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի, Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) 6-րդ և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների 13-րդ սկզբունքներին:

- բացահայտում, գնահատում և կառավարում է կլիմայի հետ կապված ռիսկերը գնահատման հուսալի գործընթացի միջոցով՝ կլիմայի վրա մեր գործունեության բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու, դեկարբոնիզացիայի հնարավորությունները լիարժեք օգտագործելու և կլիմայական փոփոխությունների նկատմամբ Ընկերության կայունությունը բարձրացնելու համար:

- ներդնում և շարունակաբար կատարելագործում է մեր կառավարման կորպորատիվ համակարգերը' ածխածնի արտանետումների կրճատման մեթոդների ինտեգրումը կազմակերպության բոլոր ստորաբաժանումներում ապահովելու համար: Ընկերությունը հանձնառու է շրջակա միջավայրի կառավարման համակարգերի շարունակական կատարելագործմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ածխածնի արտանետումների նվազեցման նախաձեռնությունների ներդրմանը Ընկերության գործունեության բոլոր ուղղություններում:

- մշակում է ճանապարհային քարտեզներ դեկարբոնիզացիայի գործընթացի համար՝ գործունեության բոլոր ուղղություններով և արժեշղթայի հիմնական փուլերում:

- նպաստում է արտանետումների նվազեցման և կլիմայական փոփոխությունների նկատմամբ կայունության բարձրացման նորարարական լուծումների հետազոտմանն ու զարգացմանը:

- ապահովում է ուսուցում՝ բոլոր աշխատակիցներին ու համապատասխան կապալառուներին կլիմայի փոփոխություններին առնչվող իրենց պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելու և դրանց իրականացման համար իրավասություններ տրամադրելու նպատակով:

- հատկացնում է անհրաժեշտ ֆինանսական և կադրային ռեսուրսներ՝ կլիմայի փոփոխությունների դեմ պայքարի նախաձեռնությունների արդյունավետ իրականացման համար, ինչը կցուցադրի շրջակա միջավայրի և կլիմայի նկատմամբ Ընկերության պատասխանատու վերաբերմունքի հանձնառությունը:

- համագործակցում է մի շարք շահագրգիռ կողմերի հետ (արդյունաբերական ձեռնարկություններ, գիտական շրջանակներ, հասարակական կազմակերպություններ, պետական և տեղական իրավասու մարմիններ և այլն) կլիմայի փոփոխությունների հետևանքների և ադապտացիայի ուղղությամբ համատեղ ջանքերի գործադրման միջոցով կլիմայի փոփոխության դեմ պայքարում Ընկերության ազդեցությունը ուժեղացնելու միջոցով:

- ակտիվորեն խրախուսում և խթանում է աշխատակիցների մասնակցությունը կլիմայի փոփոխությանն առնչվող նպատակներին հասնելու և կայուն զարգացման մշակույթի ձևավորման գործում:

- Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով թափանցիկ և պրոակտիվ կերպով համագործակցում է համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերի հետ ջերմոցային գազերի արտանետումների, ինչպես նաև վերջիններիս կրճատման ռազմավարությունների շրջանակներում:

- իրականացնում է ջերմոցային գազերի արտանետումների մոնիտորինգ, ապահովում է թափանցիկ և կանոնավոր կերպով հաշվետվությունների ներկայացում շահագրգիռ կողմերին՝ ամրապնդելով Ընկերության հաշվետվողականությունն ու հետամուտ լինելով կլիմայի փոփոխության ոլորտում մեր նպատակներին:

- պարբերաբար վերանայում և թարմացնում է կլիմայի փոփոխության հետ կապված նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:
- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Հրապարակման ամսաթիվը՝ 25.12.2024թ.